ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան.

Ի պատասխան Ձեր 22.05.2019թ. հ.01/251 գրության՝ տեղեկացվում է, որ «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի թիվ 319-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100 մետր, իսկ անհատական բնակելի տներից՝ նվազագույնը 70 մետր հեռավորության վրա, բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա) հիվանդանոցներում գործող ախտաբանաանատոմիական բաժիններում կամ բաժանմունքներում, կամ

բ) գերեզմանատներին (բացառությամբ Եռաբլուրի, Կոմիտասի անվան պանթեոնի) կից՝ գերեզմանատների զբաղեցրած հողամասի սահմանից մինչև 50 մետր հեռավորության վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ անհատ ձեռնարկատեր Կարո Դիլարյանին պատկանող քաղաքացիական հոգեհանգստի սրահը գտնվում է Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի ախտաբանաանատոմիական բաժանմունքում, ինչպես նաև Քանաքեռի գերեզմանատան անմիջական հարևանությամբ, ուստի այս դեպքում հեռավորության սահմանափակման պահանջը չի գործում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ անհատ ձեռնարկատեր Կարո Դիլարյանին պատկանող քաղաքացիական հոգեհանգստի սրահն ունի Երևան քաղաքի ավագանու որոշման պահանջներին համապատասխան ավտոկայանատեղի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ